ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «11» հուլիսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**),

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. **Տեղեկատվություն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխան գրության և դրա հիման վրա գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման վերաբերյալ.**

1.1 Գնահատող հանձնաժողովի 19.06.2024թ. նիստի N 5 արձանագրության 1-ին կետում նշված հարցի վերաբերյալ դիրքորոշում ստանալու նպատակով 19.06.2024թ. N ԴԴ-3-Ե-4906 գրությանը (կցվում է) ի պատասխան՝ 03.07.2024թ.-ին ստացվել է գրություն (կցվում է), վերջինս, պայմանավորված «Դատական համակարգ» համակարգչային ծրագրի խափանմամբ, գնահատող հանձնաժողովի քարտուղարի կատարմանն է հանձնվել 10.07.2024թ.-ին, և վերոգրյալով պայմանավորված՝ հանձնաժողովի նիստը հրավիրվել է 11.07.2024թ.-ին, ժամը 10:30-ին:

1.2 Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված պատասխան գրությունը, որոշեց «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի մասով կայացրած իր բոլոր որոշումները թողնել անփոփոխ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 03/26/13687-2024

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 011

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ

19/06/2024թ. թիվ ԴԴ/2417-24
գրության վերաբերյալ

Հարգելի պարոն Վարդապետյան

Ի պատասխան վերոհիշյալ գրության հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման ժամանակահատված է սահմանվել՝ 13/06/2024թ. ժամը 16:43-ից մինչև 14/06/2024թ. ժամը 23:59-ը, որի ընթացքում «Պիպաս Ֆուդ» ՍՊ ընկերությունը «Դիմում-Հայտարարության շտկում» էջ մուտք է գործել թվով 2 անգամ և գործողությունների պահպանման համար նախատեսված «Պահել» գործառույթն իրականացրել է 13/06/2024թ. ժամը 17:32:57-ին և 14/06/2024թ. ժամը 13:06:11-ին, ինչի արդյունքում Համակարգում որպես շտկման փաստաթղթի վերջնական տարբերակ տեսանելի է վերջին կատարած պահպանումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում հայտով ներկայացված փաստաթղթերի շտկման պահանջի դեպքում մասնակիցն արձանագրված անհամապատասխանության շտկումն իրականացնում է էլեկտրոնային տարբերակով՝ Համակարգի միջոցով, մինչև շտկման համար Համակարգով նախատեսված վերջնաժամկետը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Recoverable Signature

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Կատարող՝ Մ. Հովսեփյան, Հեռ. 011800600 (1-1-2)

Մ-10395

ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ
ԳՆԵՐՈՎ ՄԱՐՄԻՆ
ՄՈՒՏՔ N (11-32)
03.07.24

☐ Կատարված է

Հանձնարարող	Արշակ Վարդանի Վարդապետյան	Ում է հանձնարարվել	Արթուր Հա. Ասատրյան
Երբ է հանձնարարվել	2024-07-09	Կատարել մինչև	
Հսկողական	ոչ		
Առաջադրանք	Ընթացք տալ օրենքով սահմանված կարգով		

Գ. Վարդ

Մ. Հայրապետյան.

10.07.24թ Գ. Վարդ

աճուրդների համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14 ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման ժամանակահատված է սահմանվել՝ 13/06/2024թ. ժամը 16:43-ից մինչև 14/06/2024թ. ժամը 23:59-ը, որի ընթացքում «Պիպաս Ֆուդ» ՍՊ ընկերությունը «Դիմում-Հայտարարության շտկում» էջ մուտք է գործել թվով 2 անգամ և գործողությունների պահպանման համար նախատեսված «Պահել» գործառույթն իրականացրել է 13/06/2024թ. ժամը 17:32:57-ին և 14/06/2024թ. ժամը 13:06:11-ին, ինչի արդյունքում Համակարգում որպես շտկման փաստաթղթի վերջնական տարբերակ տեսանելի է վերջին կատարած պահպանումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ էլեկտրոնային աճուրդների համակարգում հայտով ներկայացված փաստաթղթերի շտկման պահանջի դեպքում մասնակիցն արձանագրված անհամապատասխանության շտկումն իրականացնում է էլեկտրոնային տարբերակով՝ Համակարգի միջոցով, մինչև շտկման համար Համակարգով նախատեսված վերջնաժամկետը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Recoverable Signature

X

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN AVAG 2003930574

Կատարող՝ Մ. Հովսեփյան, Հեռ. 011800600 (1-1-2)

Պ-10395

ՀՀ ՊԱՇՏՊԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ԿԵՆՏՐՈՆԱՅԻՆ ԱՊԱՐԱՏ

ՄՈՒՏՔ N Մ-32

03.07.24

ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե-4906 77/2417-24

«19» հունիսի 2024թ.

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ
ՊԱՐՈՆ ԱՎԱԳ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավանեսյան,

Սույնով հայտնում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով կազմակերպվել է «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/14» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում մասնակիցների ներկայացրած հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 23-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի մասով արձանագրվել է. «Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, կազմված է հրավերի պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝

ա) մասնակցի՝ ռուսերեն լեզվով անվանման փոխարեն լրացված է մասնակցի՝ հայերեն լեզվով անվանումը:

բ) թերի է լրացված 1) կետը, մասնավորապես՝ բացակայում են հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց տվյալների համապատասխանության մասին հավաստմանը վերաբերող հատվածը, ընթացակարգի ծածկագիրը և մասնակցի անվանումը:

գ) ավելորդ է 3) կետի երկրորդ պարբերությունը»:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11-րդ կետի պահանջներով՝ «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն 13.06.2024թ. էլեկտրոնային եղանակով՝ Համակարգի միջոցով, ծանուցվել է իր հայտում արձանագրված՝ հրավերի *պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների* մասին. ծանուցմամբ

միաժամանակ առաջարկվել է մինչև 14.06.2024թ. ներառյալ Համակարգի միջոցով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից՝ Ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման համար հրավերով նախատեսված կարգով և ժամկետում Համակարգում կցվել է էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարության՝ Հավելված N 1-ի, նոր տարբերակ: Գնահատող հանձնաժողովը, 17.06.2024թ. կայացած նիստի ընթացքում ուսումնասիրելով վերոնշյալ փաստաթուղթը, արձանագրել է, որ այն կազմված է հրավերի պայմաններին անհամապատասխան, մասնավորապես՝ սխալ է լրացված պատվիրատուի անվանումը:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը՝ «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել՝ միաժամանակ Համակարգում կատարելով համապատասխան գործողությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգը 23-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, և 17.06.2024թ. gnumner.minfin.am կայքում հրապարակվել է հայտարարություն՝ Ընթացակարգը 23-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ:

18.06.2024թ. «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի քարտուղարի ddgnumner@court.am էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է գրություն (կցվում է), որում մասնավրապես նշել է, որ. «համակրգը թույլ չի տվել շտկել»:

Խնդրում եմ Ձեզ, ուսումնասիրել՝ արդյոք «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի՝ գրությամբ ներկայացրած պատճառաբանությունը համապատասխանում է իրականությանը, թե ոչ, և հայտնել Ձեր դիրքորոշումը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հետագա գործողությունների համար:

Կցվում են սույն գրությանը վերաբերող բոլոր փաստաթղթերի պատճենները:

Առդիր՝ էջ:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կապ՝. Նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչություն
Հեռ.՝ /+37410/ 511-777, 511-788